դպրոց, յառկապէս մեր եկեղեցեաց համար արժանաւոր և բարեկիրթ քահանայացուներ պատրաստելու նպատակաւ, որոնցից տարաբաղդաբար զուրկ են մեր եկեղեցիք, և այդ դպրոցի գոյութիւնը ընդ միշտ ապահովելոյ համար նուիրում ենք մեր սեպհականութիւնից տասն հազար ռուբլի դրամ գլխաւորապէս հետեւեալ հիման վրա։

,, Նախ՝ այդ վանական դպրոցը ի մշտնջենական յիշատակ մեր եղբօր և հօր հանգուցեալ Թադէոս Ա. քահանայի՝ պէտք է կրէ «Բուղաղեան վանական դպրոց Սաղխանի վանից» տիտղոսը և որքան ժամանակ գոյութիւն ունենայ այն դպրոցը, պէտք է մեր տոհմից մէկը համարուի նորա հիմնադիր խնամատար Հոգաբարձուն, որը պարտաւոր է վերահասու լինել դպրոցի ներքին և արտաքին կառավարութեանը և ամեն ջանք գործ դնել և պահպանել նորան բարեկարգ վիճակի մէջ, որպէս զի հասած լինի այն իւր ցանկալի նպատակին։

,, Երկրորդ՝ մեր նուիրած 10,000 *ռուբլին պէտք է համարուի անձեռնմխելի մայր գումար, որը կը փոխարկուի ալքունի տոկոսաբեր արժեթղթերի և կպահպանուին Բագուայ յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի ընկերութեան գանձարանում, և որոյ անդորրագիրը միայն կ՚յանձնուի ի պահպանութիւն Բուղաղեան վանական դպրոցի հոգաբարձութեանը։*

,, Երրորդ՝ այն դպրոցը պէտք է գտնուի Շամախւոյ թեմական Առաջնորդի յատուկ վերահսկողութեան տակ, և ենթադրուի նորա իրաւասութեանը, որը և կը կառավարուի ազգիս ՎԵՀԱՓԱՌ Հայրապետից հաստատած առանձին կանոնադրութեամբ և ծրագրով՝ ըստ ամենայնի յարմարցնելով նրանց դպրոցի բուն նպատակին և նշանակութեանը եւն։

,, Չորրորդ՝ եթէ որ և իցէ գիպուածով Բուղաղեան վանական դպրոցի գոյութիւնը դադարի իսպառ և անհնարին լինի շարունակել նրան, այն ժամանակ ոչ ոք մեր սերունդից իրաւունք չպէտք է ունենայ յետ ստանալ մեր նուիրած 10,000 *ռուբլին, ըստ որում այդ գումարը համարուելով ազգային սեպհականութիւն, դարձեալ նրա տոկոսիքը մարդասիրական ընկերութեան խորհրդական անդամոց և մեր տոհմականի որոշմամբ*